

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

“Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև զինվորական սուրհանդակափոստային կապի ոլորտում համագործակցության մասին համաձայնագրում փոփոխություն կատարելու մասին” արձանագրության վավերացման նպատակահարմարության վերաբերյալ

Արձանագրությունն ստորագրվել է հիմք ընդունելով 2013թ. դեկտեմբերի 2-ի՝ “Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև զինվորական սուրհանդակափոստային կապի բնագավառում համագործակցության մասին” համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) 10-րդ հոդվածը:

Արձանագրությունն ստորագրվել է 2018 թվականի դեկտեմբերի 27-ին լիազորագրերի հիման վրա ՀՀ պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանի կողմից և Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարար, բանակի գեներալ Սերգեյ Շոյգուի կողմից:

Արձանագրությամբ նախատեսվում է փոփոխություններ մտցնել Համաձայնագրում և դրա Հավելված՝ Հրահանգում, որով սահմանվում է զինվորական սուրհանդակափոստային կապի ցանցով զինվորական նամակագրության առաքման կարգը:

Արձանագրությամբ փոփոխություն է կատարվում Համաձայնագրի 3-րդ հոդվածում, որի համաձայն Կողմերը նշանակում են լիազոր մարմիններ.


Հայկական կողմից՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը և Ռուսական կողմից՝ Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարությունը:

Արձանագրությամբ կատարվող փոփոխությունների նպատակն է հստակեցնել և ավելի ոլորին դարձնել Համաձայնագրի իրագործումը: Փոփոխությունները կապված են այն բանի հետ, որ ՀՀ և ՌԴ միջև չկա մաքսային սահմաններ:

Արձանագրությունը ամրագրում և Համաձայնագրով սահմանված կարգով ձևակերպում է Համաձայնագրում կատարվող փոփոխությունները:

Հաշվի առնելով վերոնշյալը նաև այն, որ Համաձայնագրով նախատեսված է փոփոխությունների մասին արձանագրությունները պետք է ուժի մեջ մտնեն նույն ընթացակարգով /ԱԺ վավերացմամբ/, ՀՀ պաշտպանության նախարարությունը նպատակահարմար է համարում սկսել Արձանագրության վավերացման նպատակով սահմանված ընթացակարգերը:

ՀՀ պաշտպանության նախարար



Դ.ՏՈՆՈՅԱՆ

